

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 1-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Օգոստոսի 2-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Բյուրականի «Հայկաշէն» հայրապետանոցում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը: Սույն նիստում Վեհափառ Հայրապետի առաջարկով Մայր Աթոռին առընթեր կազմվում է իրավագիտական մի հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1. Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյան՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի.
2. Պատմաբան, դոցենտ Հովհաննես Թոփուզյան՝ անդամ Գերագույն հոգևոր խորհրդի.
3. Կանոնագետ դոկտոր Վազգեն Հակոբյան.
4. Իրավաբան, դոցենտ Մակիչ Ուզունյան.
5. Դոկտ.-պրոֆեսոր Գևորգ Խոլոպյան:

*
* *

Օգոստոսի 6-ին, ուրբաթ.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունը մեկնում է մեկօրյա շրջապտույտի Սևան՝ գլխավորությամբ ավագ վերակացու տ. Արտակ քհն. Սիմոնյանի:

*
* *

Օգոստոսի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արաքաջյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Օգոստոսի 11-ին, չորեքշաբթի.—Այսօր Ռումինիայի Սոցիալիստական Հանրապետության պրեզիդենտ Նիկոլաե Չաուշեսկուն իր հարգելի կնոջ՝ Ելենա Չաուշեսկուի

[illegible]

և ռումինացի պաշտոնական այլ անձանց հետ այցելեց Մայր տաճար, ուր, հանուն Հայոց Հայրապետի, հարգելի հյուրերին դիմավորում և ողջունում է լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և բացատրություններ տալիս հայ եկեղեցու դարավոր կենտրոնի պատմության և հայ ժողովրդի հոգևոր, մշակութային և հայրենասիրական կյանքում նրա կատարած առաքելության մասին:

Այնուհետև Նորին Վսեմություն պրն. Չաուշեսկուն և նրան ուղեկցող հարգելի հյուրերին Վեհարանում ընդունում և ողջունում է Վեհափառ Հայրապետը:

Հայոց Հայրապետի և պրն. նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում:

*
* *

Օգոստոսի 12-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը հանգստանալու համար մեկնում է Ջերմուկի առողջարան:

Նորին Սրբությանն ուղեկցում էր Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաքարյանը:

*
* *

Օգոստոսի 15-ին, կիրակի.—Վերափոխումն ս. Աստուածածնի.

Օրվա մեծ տոնի առթիվ Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում խաղողօրհնության ավանդական կարգ:

*
* *

Օգոստոսի 16-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավ. քհն. Մարուքյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Օգոստոսի 18-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռի միաբանությունը, գլխավորությամբ լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի, մեկնում է մեկօրյա շրջապտույտի դեպի Ամբերդ:

*
* *

Օգոստոսի 20-ին, ուրբաթ.—Այսօր Աթենքից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Եզնիկ վրդ. Պետրոսյանը, որը Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ յոթ ամիս առաջ մեկնել էր Աթենք սովորելու տեղի համալսարանում:

Սեպտեմբերին, Մայր Աթոռում տեղի ունենալիք հոբելյանական հանդիսություններին մասնակցելուց հետո, տ. Եզնիկ վարդապետը կվերադառնա Աթենք՝ շարունակելու համալսարանական իր կրթությունը:

*
* *

Օգոստոսի 21-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռի աշխատավորները երկօրյա ուխտագնացության են մեկնում դեպի Հաղարծին, Գոշավանք և Մակարավանք, որոնք գտնվում են Դիլիջանի և Իջևանի շրջաններում:

*
* *

Օգոստոսի 22-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արաբաջյանը:

*
* *

Օգոստոսի 26-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ ս. Հռիփսիմե եկեղեցում վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը քահանա է ձեռնադրում հոգևոր ճեմարանի նախկին ուսանող Ռուբեն սրկ. Սաղոյանին:

Տ. Ռուբեն քհն. Սաղոյանը ծնվել է 1949 թ. մայիսի 11-ին Ծղրուդ գյուղում (Ախալցխայի շրջան):

1965 թ. ընդունվել է հոգևոր ճեմարան և սովորել մինչև 1967 թ. նոյեմբեր ամիսը:

Մինչև ձեռնադրվելը դպրության պաշտոն է կատարել Ախալցխայի ս. Գրիգոր եկեղեցում:

*
* *

Օգոստոսի 27-ին, ուրբաթ.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունը մեկօրյա շրջապտույտի է մեկնում դեպի ս. Գեղարդ՝ գլխավորությամբ ավագ վերակացու տ. Արտակ քհն. Սիմոնյանի:

*
* *

Օգոստոսի 29-ին, կիրակի.—Տօն գիտ գոտուոյ սրբուհւոյ Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

*
* *

Օգոստոսի 30-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Ջերմուկի առողջարանում շուրջ քսան օր հանգստանալուց հետո, Մայր Աթոռ է վերադառնում Վեհափառ Հայրապետը՝ ընկերակցությամբ տ. Նարեկ եպս. Շաքարյանի:

*
* *

Սեպտեմբերի 4-ին, շաբաթ.—Այսօր, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետին են այցելում սփյուռքահայ մի խումբ ուսուցիչներ, որոնք ժամանել էին Անգլիայից, Կանադայից, Լիբանանից, Իրաքից, Կիպրոսից, Ավստրալիայից, ԵԱՀ-ից, Սիրիայից և Երուսաղեմից:

Վեհափառ Հայրապետը ողջունում է սփյուռքահայ ուսուցիչների ներկայությունը Մայր Աթոռ, Իր հայրապետական գնահատությանն արժանացնում սփյուռքի պայմաններում հայ ուսուցիչների կատարած պատասխանատու, դժվարին և պատվավոր աշխատանքը՝ հայ նոր սերունդը քրիստոնեական ու հայեցի ոգով դաստիարակելու ուղղությամբ:

Իր խոսքում Նորին Սրբությունը շեշտում է, որ սփյուռքում հայ դպրոցների գոյությունը մեծագույն նվերն է մայր հայրենիքին:

Վերջում Վեհափառ Հայրապետը օրհնում է նրանց աշխատանքը և հաջողություն մաղթում:

*
* *

Սեպտեմբերի 5-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Վերափոխման.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Եզնիկ վրդ. Պետրոսյանը:

*
* *

Սեպտեմբերի 7-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին մասնակցում էին նաև վերջերս Մայր Աթոռին առընթեր կազմված Իրավագիտական հանձնաժողովի անդամները՝ դոկտ. Վազգեն Հակոբյանը, դոց. Մակիչ Ուզունյանը և պրոֆ. Գևորգ Խալաթյանը:

Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում դարձյալ քննության են առնվում և հաստատվում Վեհափառ Հայրապետի 20-ամյա գահակալության և սրբալույս մեռոնի օրհնության հանդիսությունները կազմակերպված անցնելու ծրագրերը:

*
* *

Սեպտեմբերի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթը, ամառային արձակուրդներից հետո:

*
* *

Սեպտեմբերի 11-ին, շաբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետին այցելում են ավստրալիահայ ուխտավորների մի խումբ, որոնք աջահամբույրով ստանում են Հայոց Հայրապետի օրհնությունները:

*
* *

Սեպտեմբերի 12-ին, կիրակի.—Խաչվերաց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Մանչեստրի հայոց հոգևոր հովիվ տ. Մասիս վրդ. Գալստյանը, որն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է «Սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ» ուրբ Խաչի շարականի բնաբանով:

Երեկոյան, ժամը 17-ին, լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի հանդիսադրությամբ, տեղի է ունենում Խաչվերացի ավանդական թափորը:

*
* *

Սեպտեմբերի 18-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ վասն «Համօրէն ննջեցելոց»:

*
* *

Սեպտեմբերի 19-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և քարոզում «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» (Մատթ. Ե 9) բնաբանով: